Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Երաշխավորված ավանդի չափերը

1. Սույն օրենքով սահմանված կարգով երաշխավորված ավանդի չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

1.1 Սույն հոդվածով սահմանված երաշխավորված ավանդի չափերը ենթակա են վերանայման առնվազն հինգ տարին մեկ Հիմնադրամի խորհրդի առաջարկությամբ և Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Այդ որոշման ուժի մեջ մտնելու պահից երաշխավորված ավանդի չափերը համարվում են գործող Կենտրոնական բանկի խորհրդի այդ որոշմամբ սահմանված չափերով: Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է երաշխավորված ավանդի չափերի հաշվարկման (վերանայման) չափանիշները:

2. Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Հոդված 9. Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը և պայմանները

[illegible]

2. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր է, ապա երաշխավորվում է նրա առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում իր մասնաբաժնի հանրագումարը՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված կարգով և չափով:

3. Եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված կարգով և չափով:

Խնդրահարույց պարտավորությունների տեսակները, հատուցման ենթակա ավանդի հաշվարկման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Հոդված 14. Լրացուցիչ երաշխիքային վճարները

1. Բանկերը լրացուցիչ երաշխիքային վճարը կատարում են, եթե Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների, բավարար չեն սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված կարգով և չափով երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնելու համար: Միջոցների անբավարարության մասին որոշումը կայացնում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը: Հիմնադրամը հաշվարկում է երաշխավորված ավանդների հատուցման համար անհրաժեշտ լրացուցիչ երաշխիքային վճարների չափը:

Հոդված 19. Հիմնադրամի կառավարման մարմինները

4. Սույն օրենքին և հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

[illegible]

ժ) ընտրում է Հոգաբարձուների խորհրդի՝ սույն հոդվածի 2-րդ մասով նշված անդամին.

ժա) վերահսկում է իր որոշումների կատարման ընթացքը.

ժբ) վերահսկում է Հիմնադրամի ընթացիկ և ֆինանսատնտեսական գործունեությունը.

ժգ) ընդունում է որոշումներ Հիմնադրամի տնօրենի, կանոնադրությամբ սահմանված այլ մարմիններ ձևավորվելու դեպքում՝ դրանց ընտրության և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

ժդ) հաստատում է Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը և դրանց փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները.

ժե) հաստատում է Հիմնադրամի աշխատակիցների վարձատրման և պարգևատրման կարգը.

ժե.1) առնվազն հինգ տարին մեկ քննարկում է երաշխավորված ավանդի՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված չափերի վերանայման հարցը՝ Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից:

Հոդված 18. Հիմնադրամի գործառույթները

Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) հավաքագրում է երաշխիքային վճարները.

բ) իրականացնում է Հիմնադրամի միջոցների, երաշխավորված ավանդների, ավանդատուների թվի և այլ վերլուծություն.

գ) միջնորդություններ է ներկայացնում Կենտրոնական բանկ սույն օրենքով սահմանված երաշխիքային վճարները չվճարած բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու, բանկերի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը պարզելու նպատակով Կենտրոնական բանկի կողմից ստուգումներ անցկացնելու համար.

դ) սույն օրենքով սահմանված պայմաններով կառավարում է Հիմնադրամի միջոցները.

ե) հատուցում է երաշխավորված ավանդները՝ ~~սույն օրենքով սահմանված կարգով, չափերով և դեպքերում.~~

զ) ստանում է վարկեր (փոխառություններ), երաշխիքներ, դրամաշնորհներ, նվիրատվություններ և նվիրաբերություններ.

է) ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հատուցումը սույն օրենքով սահմանված կարգով կազմակերպելու համար.

ը) լուսաբանում է ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացը.

թ) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ գործառույթներ: